

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

## ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի

02 մարտի 2015թ.

2015 թ. մարտի 02-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում տեղի ունեցավ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ներքին աուդիտի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նիստ, որին մասնակցում էին՝

1. Գ. Ղազարյանը - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, կոմիտեի նախագահ.

2. Մ. Անանյան - նախարարության աշխատակազմի ղեկավար, կոմիտեի անդամ.

3. Ռ. Գալստյան - նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, կոմիտեի անդամ.

4. Ա. Թադևոսյան - նախարարության աշխատակազմի ծրագրերի կառավարման վարչության պետ, կոմիտեի անդամ.

5. Ն. Շահբազյան - նախարարության աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության պետ, կոմիտեի անդամ.

6. Հ. Վարդանյան - նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ, կոմիտեի անդամ.

7. Ա. Ավետիսյան - նախարարության ներքին աուդիտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Քննարկվեց՝ նախարարության ներքին աուդիտի 2014 թ. գործունեության ամփոփ հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան ամփոփ հաշվետվությունը):

Տարեկան ամփոփ հաշվետվությունը ներկայացրեց ներքին աուդիտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ավետիսյանը: Մասնավորապես՝ Ա. Ավետիսյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց ներքին աուդիտի բաժնի կողմից 2014 թ. ընթացքում իրականացված աուդիտների մասին քանակական և համեմատական տեղեկատվություն, որոնք վերաբերում էին 2014 թ. աուդիտի աշխատանքային ծրագրով նախատեսված և

փաստացի իրականացված աուդիտներին, աուդիտների ընթացքում բացահայտված թերություններին ու խախտումներին, աուդիտորների կողմից դրանց վերացման համար կատարված առաջարկություններին:

Ա. Ավետիսյանը նիստի մասնակիցներին նաև տեղեկացրեց, որ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջի ներկայացվող տարեկան հաշվետվությունը մինչև մարտի 01-ը ենթակա է ներկայացման ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Քննարկմանը մասնակցեցին՝ Մ. Անանյանը, Ա. Թադևոսյանը, Հ. Վարդանյանը: Տրվեցին հարցեր աուդիտի ենթակա միավորներում տեղ գտած ընդհանուր թերությունների, դրանց բացահայտման և շտկման մեթոդների վերաբերյալ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ Ա. Ավետիսյանը տվեց մանրամասը բացատրություններ:


**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հավանություն տալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի 2014 թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվությանը:

2. Հանձնարարել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սահմանված կարգով և ծավալով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներքին աուդիտի 2014 թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվությանը:


Որոշումն ընդունվեց միաձայն:

Ներքին աուդիտի կոմիտեի նախագահ՝







Գ. Ղազարյան

Ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար՝



Ա. Ավետիսյան

Ն. Մանուկյան	
Պ. Գալստյան	
Ա. Թադևոսյան	
Ռ. Գարգուսյան	
Է. Եսեբրայան	